

Հ Ա Ր Յ Ա Ք Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ա Յ Ժ Ո Ղ Ո Վ Բ Դ Ա Կ Ա Ն Գ Պ Բ Ո Յ Ի Ն Ս Ի Մ Յ Ե Ր Ո Փ Ո Ւ Լ Ի

Ի 22 ՅՈՒՆԻՍԻ ՏԱՐՈՅՍ

Սխմեցողութիւն ժողովրդական Դպրոցին աշակերտները 56 պատանիք են՝ հինգ կարգ բաժնուած :

Դպրոցին Տեսուչն է արժանապատիւ Տէր Յակոբ Աւագ քահանայն Սուրենեանց, որ եւ գլխաւոր ուսմանց զաստիճութիւնը վրան առած է :

Այս տարւոյս Հարցաքննութեան Հանգիսին մէջ ուրիշներէն աւելի յառաջադիմութիւն ցուցնող աշակերտներն եղան

Ա. ԿԱՐԳԷՆ,

Բէջէլեան Գրիգոր.  
Պօղոսեան Յովհաննէս :

Բ. ԿԱՐԳԷՆ,

Մոմճեան Յովակիմ.  
Պուխարցեան Կարապետ.  
Պարտախճեան Յովհաննէս :

Գ. ԿԱՐԳԷՆ,

Թօփալեան Յովհաննէս.  
Խանճեան Յովհաննէս.  
Թօփալեան Սարգիս :

Դ. ԿԱՐԳԷՆ,

ձէվախիրճեան Մարտիրոս.  
Թումանեան Յարութիւն.  
Մկրտչեան Գէորգ :

Ե. ԿԱՐԳԷՆ,

Մոմճեան Միքայէլ.  
Դարագաշեան Աւետիք.  
Խարայեան Մինաս :

Բ Ա Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ասացեալ ինանդիսի սարկիսն հարցախնուրեան աշակերտաց ժողովրդական Դպրոցին Սխմեցողութիւն.

Մեծարգոյ Տեսարք.

Ձեր եռանդուն ազգասիրութիւնը եւ ուսումնասիրութիւնը փութացոյց զմեզ այսօր ժողովիլ այս տեղ՝ քաղերոյ ձեր Ազգի մանկանց տարեկան աշխատութեան, եւ ձեր առատաձեռնութեամբ արդիւնաւորած կըրթութեան հունձը : Բայց մեք, Տեսարք, չունեալով ձեր փափաքանաց բաւականութիւն տուող արգիւնք, մեր բերանն անգամ կբանամք՝ ձեր ներողութեանը ապաւինելով, եւ մեր լեզուքը կշարժեմք մեր տկարութիւնը խոստովանելով, եւ ի վերայ այսր ամենայնի

գովելի համարձակութեամբ կբանամք ձեր առաջը մեր մտաց շտեմարանը, պարծանք մեզ համարելով (եթէ ունիմք) աստուածային լուսածաւալ շնորհաց ամենափոքր մի նըշոյլը եւ դիտութեան անյատակ ուղիանոսին մի կաթիլը :

Մեք՝ այս տարւոյս հրապարակական հարցաքննութեան մէջ յուսումք թէ ներկայացուցինք մեր տկար կարողութեամբ մասնաւոր պատրաստութիւն մի կրօնական գիտութեանց մէջ՝ ջերմեռանդն քրիստոնեայ որդիք լինելոյ Ազգիս, հայախօս անդամ լինելոյ Ազգին, եւ բարոյական կենօք հասարակութեան ընկեր, արտաքին ուսմանց մասնաւոր տեղեկութեամբ՝ ծառայ հասարակաց օգտի : Ազգային համառօտ պատմութեան տեղեկութեամբ՝ արծարծեցաւ մեր սրտին մէջ սրբազան պարօք սիրելոյ զԱզգ մեր, զԱզգ մեր՝ որոյ պատմութեան ամենայն թերթերը մեզ պատկեր են բարոյական կենաց եւ գաղափար. որոյ երբեմն՝ եթէ շատ ազգաց նախանձելի էր թագըր եւ գահը, լայնածաւալ սահմանաց եւ մեծայաղթ զինուց փառաւորութիւնը, թող լինի եւ այժմ մեզ պարծանք՝ նախնեաց աւանդած սուրբ կրօնքը եւ հայրապետական Աթոռոյն եւ գաւազանին մեծաշուք փառքը, եւ մեր Սրբազան Հովուապետին ազգասիրական եւ ուսումնասիրական անքուն հսկողութիւնը. եւ վերջապէս, թող լինի մեզ առհաւատչեայ Ազգային յառաջադիմութեան ձեր, Ազգասէր Տեսարք, տնինայ օժանդակութիւնը եւ նախանձաւորութիւնը, որով ոչ միայն հայացի, այլ եւ Ռուսաց եւ Գաղղիացոց լեզուաց առինք ճաշակը :

Ընդունեցէք, Տեսարք, ձեր Ազգի որդեոցս խոնարհանուէր երախայրիքը անարգամեծար հոգւով. մի խնայէք ձեր քաջալերութիւնը եւ նպաստը յառաւել բարեկարգութիւն այս Դպրոցիս : Հանգանակեցէք ձեր բարեմաղթութիւնը առ աղբիւրն շնորհաց սուրբ Հոգին, որպէս զի նորա պարգեւած իմաստութեան եւ շնորհաց լոյսը՝ որ ծաւալեցաւ Ազգիս մէջ անօրինակ ճգնութեամբ եւ տքնութեամբ սուրբ լուսաւորչաց թարգմանչաց եւ սրբազան Հարց, լուսաւորէ եւ մեր միտքը յօգուտ Ազգի եւ իսլայծառութիւն սուրբ եկեղեցւոյ :

